

## **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

### **ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի 2013թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հիմնական արդյունքների մասին**

#### **I. Կարևորագույն արդյունքները**

**«Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում»** (ղեկ. ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, տ.գ.դ. Վ.Հարությունյան) թեմայում հիմնավորվել են հարկային ներուժի գնահատման մոտեցումները հարկային բեռի օպտիմալացման տեսանկյունից՝ հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտների հարկերից խոսափելու նվազեցման ուղիները: Հարկային ներուժի վերաբերյալ անհրաժեշտ է իրականացնել նաև խոր և հիմնարար ուսումնասիրություններ՝ հաշվի առնելով տնտեսական, սոցիալական, պատմական և քաղաքական գործոններն ու դրանց դրսևորման առանձնահատկությունները, որոնք կնպաստեն հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը ՀՀ-ում:

Հրատարակվել են. Յու.Սուվարյանի, Վ.Հարությունյանի, Վ.Սարգսյանի, Վ.Խաչատրյանի «Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը», Վ.Հարությունյանի գիտ. խմբ. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր, արդի հիմնահարցեր», Ռ.Սարինյանի «Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները» գրքերը: Հ.Ավագյանի «ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը» մենագրությունում քննարկվում են շահագործվող (և շահագործման պատրաստվող) հանքավայրերում օգտակար տարրերի կորզումների և շրջակա միջավայր թափվող ծանր մետաղների հետ կապված հիմնախնդիրները: Ա.Բայադյանի «ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» աշխատությունում ուսումնասիրված են ոլորտում վերամշակվող հումքի մթերման արդյունաբերական կազմակերպությունների և ինտեգրացիոն հարաբերությունների, արդյունաբերության զարգացման և բարելավման հիմնական ուղիները: Դ.Հարությունյանի «Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»

մենագրությունում քննարկվում են մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը երկրի վճարային հաշվեկշռի վրա և հավասարակշռելու ժամանակակից մեթոդների առավելություններն ու խոցելի կողմերը:

## **II. Բազային ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները**

**1. «Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ»** ուղղության հետազոտվող թեմաներն են.

**1) «Հակաճգնաժամային միջոցառումներն աշխարհում և Հայաստանում»** (ղեկ. ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, տ.գ.դ. Վ.Հարությունյան) թեմայում բացահայտվել է, որ համաշխարհային տնտեսության մեջ իրականացած և այժմ էլ դեռևս իրականացվող հակաճգնաժամային միջոցառումները տվել են որոշակի արդյունքներ, սակայն առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք, այնուամենայնիվ, կարող են ռիսկային լինել համաշխարհային տնտեսության համար և իրենց բացասական ազդեցությունը թողնել զարգացող ու փոքր բաց տնտեսություն ունեցող երկրների վրա:

Բացահայտվել է նաև, որ ԱՄՆ տնտեսության մեջ ահազնացող պարտքային դեֆոլտի վտանգը և դրա արդեն իսկ նկատելի բացասական ազդեցությունը, ԵՄ-ում պետական պարտքերի աճը և, հատկապես, ՌԴ տնտեսությունում տեղի ունեցող աճի տեմպերի դանդաղեցումն իրենց բացասական ազդեցությունը կթողնեն ՀՀ տնտեսության զարգացման տեմպերի վրա: Այդ իսկ պատճառով կարևորվել են ՀՀ-ում կառավարության կողմից որդեգրված ծրագրային դրույթների և գերակայությունների իրականացումը, ինչպես նաև դրանց ճիշտ և ժամանակին հակապարբերաշրջանային ուղղվածություն տալու հանգամանքը՝ սոցիալական ապահովության ծրագրերի մշակման, տնտեսական ցնցումների և ճգնաժամերի սոցիալական բացասական ազդեցության չեզոքացմանն ուղղված լինելու համատեքստում:

**2) «Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում»** (ղեկ. ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, տ.գ.դ. Վ.Հարությունյան) թեմայի շրջանակներում վերլուծվել են պետության սուբյեկտների հարկային պոտենցիալի գնահատման ժամանակակից մեթոդները, ինչպես նաև առանձնացվել դրանց մեթոդաբանական մշակման յուրովի մոտեցումները՝ հարկային եկամուտների օպտիմալացման և հարկային վարչարարության բարելավման տեսանկյուններից: Գնահատելով

հարկային ներուժի վրա ազդող գործոնների համակարգը՝ ներկայացվել են հարկային ներուժի դինամիկայի և բաշխման առանձնահատկությունները:

3) **«Ձեռնարկատիրության արդի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում»** (ղեկ. տ.գ.թ. Ա.Թամազյան) թեմայում ուսումնասիրվել է Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության արտաքին միջավայրը ձևավորող հիմնական գործոնները, կատարվել է դրանց մանրամասն վերլուծություն, քննարկվել են ձեռնարկատիրության տարածաշրջանային ինտեգրացիայի, օրենսդրական, տեղեկատվական ապահովվածության և պետական կարգավորման կատարելագործման հիմնահարցերը, քննադատական վերլուծության են ենթարկվել ինովացիաների և վենչուրային ձեռնարկատիրության կարգավորման ծրագրային և օրենսդրական հիմքերը Հայաստանում՝ մշակելով այս խնդիրների լուծման ուղիներ և միջոցառումներ: Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ ՀՀ-ում ներքին շուկայի տարողունակությունը, հատկապես վերամշակման բարձր մակարդակ պահանջող ապրանքների գծով, շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա, ներկայումս տեղեկատվական տեխնոլոգիաներին հատկացվող մեծ դերն ավելի շատ պայմանավորված է որոշակի ներուժի առկայությամբ, քան թե դրա իրական օգտագործմամբ, ձեռնարկատիրության տեղեկատվական ապահովվածությունը գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա, ինչը թույլ չի տալիս ձեռնարկատերերին ժամանակին և ճկուն կերպով արձագանքել շուկայի տարբեր ազդակներին և համարժեք ձևով ճշգրտել իրենց ձեռնարկությունների զարգացման ռազմավարությունն ու մարտավարությունը:

4) **«Հարկային բեռի գնահատման հիմնահարցերը և հավասարաչափ բաշխման խնդիրները ՀՀ-ում»** (ղեկ. տ.գ.թ. Գ.Կիրակոսյան) թեմայում գնահատվել է հարկային համակարգի դերը տնտեսության զարգացման գործում, բացահայտվել են հարկային քաղաքականության առանձնահատկությունները զարգացող և զարգացած տնտեսությունների պայմաններում, ուսումնասիրվել է հարկային բեռի տնտեսագիտական բովանդակությունը, քննարկվել են դրա բաշխման խնդիրները և գնահատվել է վերջինիս ազդեցությունը տնտեսության վրա, վերլուծության են ենթարկվել պետական եկամուտների ձևավորման և դրանց հավաքագրման խնդիրները, ինչպես նաև հարկային մուտքերի ապահովման տնտեսական նախադրյալները, ուսումնասիրվել են ՀՀ-ում հարկային բեռի բաշխման առանձնահատկությունները, դրա վրա ազդող գործոնները, հարկային համակարգի գործունեությունը կանոնակարգող օրենսդրա-

կան դաշտը, բացահայտվել են դրա բացթողումները և թերությունները, քննարկվել են հարկային բեռի հավասարաչափ բաշխման խնդիրը և դրա լուծման ընդհանուր մոտեցումները, դիտարկվել են հարկային բեռի գնահատման եղանակները, իրականացվել է տարբեր երկրների կտրվածքով հարկային բեռի մակարդակի համեմատական վերլուծություն:

5) «**ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի բարելավման հիմնախնդիրները՝ հակաճգնաժամային արդյունավետ մեխանիզմների մշակման համատեքստում**» (ղեկ. տ.գ.թ., դոցենտ Վ.Խաչատրյան) թեմայում բացահայտվել են Հայաստանի տնտեսական ներուժն ու ճկունությունն (դիմացկունություն) ավելացնելու քաղաքականությանն ուղղված մոտեցումներ և մեխանիզմներ: Հարցումների արդյունքների վերլուծության շնորհիվ գնահատական է տրվել ՀՀ-ում իրականացված սոցիալ-տնտեսական քաղաքականության, ինչպես նաև տնային տնտեսությունների կողմից հակաճգնաժամային արդյունավետ ռազմավարությունների ընտրությանը:

Հիմնավորվել է ՀՀ-ում ՓՄՁ-ների կողմից ճգնաժամի հաղթահարման մրցունակ ռազմավարությունների մշակման անհրաժեշտությունը, ինչպես նաև մրցակցային առավելությունների կատարելագործմանն ուղղված քաղաքականության շարունակականության ապահովումը:

Հիմնավորվել է Հայաստանի տնտեսական քաղաքականության հիմնական վեկտորի դեպի Ասիա ուղղվածություն տալու և Մաքսային միության շրջանակներում առավել մրցունակ դիրք գրավելու տնտեսական հնարավորությունները:

2. «**Տնտեսության իրական հարվածի հիմնախնդիրները**» ուղղության հետազոտվող թեմաներն են.

1) «**ՀՀ ագրարային ոլորտի արտադրական գործընթացների տնտեսավարման ձևերի կարգավորման հիմնախնդիրների լուծման ուղիները**» (ղեկ. տ.գ.դ. Ա.Բայադյան) թեմայում ուսումնասիրվել է գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման սկզբունքները, կարգավորման խնդիրները, գործող կոոպերատիվների գործունեությունը, ուղղվածությունը, կազմավորման խոչընդոտող գործոնները, հաղթահարման հնարավորությունները: Մանրամասն վերլուծության է ենթարկվել կոոպերատիվների զարգացմանն ուղղված աջակցությունը, որի շնորհիվ այժմ գործում են 148

գյուղացիական կոոպերատիվներ, որոնց նպատակը արտադրության զարգացման խթանումն է:

Արվել են մի շարք առաջարկություններ համայնքների տնտեսական զարգացմանն ուղղված աջակցությունների ապահովման, սուբսիդավորման միջոցով մատչելի վարկավորման, խորհրդատվության խորացման, մարքեթինգի զարգացման վերաբերյալ:

**2) «Լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը»** (ղեկ. երկր.հանք.բանական գ.դ. Հ.Ավագյան) թեմայում ներգրավվել են 10 մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր և հանքավայրերի խմբեր, որոնցից 7-ը այժմ շահագործվում են, իսկ 3-ը պատրաստվում են շահագործման:

Այժմ շահագործվող հանքավայրերից թողարկվում են միայն կիսաարտադրանքներ՝ մետաղների խտանյութեր, որոնց գերակշիռ մասը՝ մետալուրգիական գործարաններ չունենալու պատճառով, վաճառվում են արտասահմանյան երկրներին էժան գներով:

Խտանյութերի արտադրության գործընթացներում ուշադրության են արժանացվում միայն ու միայն հիմնական մետաղները, որոնք էլ հանքաքարերից խտանյութերի մեջ կորզվում են շատ ցածր տոկոսներով՝ հիմնականում 60-70, բացառիկ դեպքերում՝ 80: Այդպիսի թերկորզման հետևանքով էլ բնական միջավայր (պոչամբարներ) են թափվում հարյուրավոր ու հազարավոր տոննաներով ծանր մետաղներ և թունահարույց հատկություններով տարրեր, որոնք՝ բոլորը միասին, ստեղծում են էկոլոգիական աղետով սպառնացող միջավայր:

**3) «ՀՀ փարածաշրջանային ինֆեզրման գործընթացները (Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև առևտրափոխակապերի կապերի գնահատականը և հետագա զարգացման միտումները)»** (թեմ.ղեկ. տ.գ.դ. Թ.Թորոսյան) թեմայի շրջանակներում ներկայացվել են Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) բնառեսուրսային կարողությունները, տրվել է դրանց տնտեսական գնահատումը արտաքին առևտրի զարգացման տեսանկյունից:

Հատուկ ուշադրություն է դարձվել ԻԻՀ մակրոտնտեսական ցուցանիշների

փոփոխության միտումների բացահայտման վրա վերջին 10 տարվա կտրվածքով՝ առանձնացնելով երկրի մակրոտնտեսական իրավիճակը մինչև միջազգային կառույցների կողմից տնտեսական պատժամիջոցների կիրառումը և դրանից հետո:

Ուսումնասիրվել է ԻԻՀ ներդրումային միջավայրը, հետազոտվել է օտարերկրյա ներդրումների շարժը, դրանց կառուցվածքը երկրների կտրվածքով: Վերլուծվել է ԻԻՀ արտաքին առևտուրն աշխարհի տարբեր երկրների հետ: Ընդ որում՝ արտաքին առևտուրը դիտարկվել է նաև ապրանքային կառուցվածքի կտրվածքով: Ցույց են տրվել ԻԻՀ տնտեսության այն ոլորտները, որոնք արտահանման տեսանկյունից ունեն բացահայտված համեմատական առավելություններ:

Ուսումնասիրվել է նաև բնակչության և աշխատանքային ռեսուրսների միգրացիոն փոփոխությունները, որոնք հատկապես դրսևորվել են ԻԻՀ-ից արտահոսքի տեսքով՝ որպես հետևանք միջազգային կառույցների կողմից տնտեսական պատժամիջոցների կիրառման:

**3. «Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ»** ուղղության հետազոտվող թեմաներից է.

**1)«Էլեկտրոնային պետության և տեղեկատվական հասարակության ձևավորման տնտեսական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում»** (ղեկ. տ.գ.թ. Հ.Մարկոսյան) թեմայում ուսումնասիրվել է տեղեկատվական հասարակության զարգացման և էլեկտրոնային պետության ձևավորման հայեցակարգային մոտեցումները և սկզբունքները, դրա հիմքում ընկած օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Վերլուծվել է տեղեկատվական հասարակության և էլեկտրոնային պետության հասկացության և բովանդակության ընդգրկման շրջանակը և արտերկրյա առաջադեմ փորձը: Տրվել է նախորդ դարի 60-ական թվականներից ձևավորված հասարակական հարաբերությունների սկզբունքորեն նոր հայեցակարգ, որը բնութագրվում է որպես տեղեկատվական հասարակություն: Էլեկտրոնային պետությունը ներկայացվել է որպես տեղեկատվական հասարակության զարգացման նոր փուլ և մակարդակ, որը հնարավորություն է տալիս ոչ միայն բարձրացնել պետական կառավարման համակարգի արդյունավետությունը, այլև նոր հնարավորություններ է ընձեռում տնտեսական գործունեության զարգացման և միջազգայնացման համար:

**2) «Սոցիալական և ժողովրդագրական անվրանգության ապահովման նախադրյալները ՀՀ-ում»** (ղեկ. տ.գ.դ. Թ.Մանասերյան) թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է անհատ-ընտանիք-հասարակություն-պետություն կապը և դրա էվոլյուցիան անկախության տարիներին, բացահայտվել են բնակչության կենսամակարդակի վրա ազդող երևույթներն ու գործոնները, դրա բարելավման հնարավոր ուղիները: Վերլուծության են ենթարկվել միգրացիոն գործընթացները Հայաստանում անկախության երկու տասնամյակներում: Ներկայացվել են բնակչության կազմի փոփոխությունները և դրանք ծնող պատճառները: Տնտեսական վերլուծություններով հիմնավորվել են զբաղվածության ավելացման միջոցով աղքատության կրճատման հնարավորությունները:

**4. «Տնտեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմության»** ուղղության հետազոտվող թեմաներն են.

**1) «Կանաչ տնտեսության և տնտեսությունների առաջնային զարգացումը՝ որպես հասարակության զարգացման և աղքատության հաղթահարման կարևորագույն ուղիներ»** (ղեկ. տ.գ.դ., Բ.Եղիազարյան) թեմայում նշվել է, որ «կանաչ տնտեսության» մոդելը ունի մի շարք դրական կողմեր: Աստիճանական անցում կատարելով «կանաչ տնտեսության»՝ մարդկությունը ստանում է իրական տնտեսական, սոցիալական օգուտներ, որոնք շոշափելի կլինեն ոչ միայն այժմյան սերունդների, այլև ապագա սերունդների կենսագործունեության համար: Շրջակա միջավայրի պահպանությունը դառնում է այս համակարգի հիմնական առանձնահատկություններից մեկը: Առանձնացված է մի քանի դրույթներ.

- «Կանաչ տնտեսությանն» անցումը չի կարող լինել ակնթարթային: Այս գործընթացն ունի աստիճանական բնույթ, պայմանավորված է առաջին հերթին տարբեր երկրների առանձնահատկություններով:
- ՀՀ-ում «Կանաչ տնտեսությանն» անցումը պետք է սկսել էներգետիկ, ջրային ռեսուրսների, ձկնարդյունաբերության, զբոսաշրջության և տրանսպորտային համակարգի ոլորտներից, որոնք համարվում են ՀՀ տնտեսության հենասյուները և այստեղ ավելի հեշտ կլինի իրականացնել անցումը, քանի որ եկամուտների մեծ մասը կուտակվում է այս ոլորտներում: ՀՀ-ում պետք է հատուկ ուշադրություն դարձնել գյուղատնտեսության կանաչացմանը, որը կնպաստի գյուղական

բնակչության զբաղվածության ապահովմանը, աղքատության հաղթահարմանը և դրանով իսկ կկրճատվի մասսայական արտագաղթը սահմանային գյուղերից:

- Կարևորվում է գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, այսինքն՝ յուրաքանչյուր ոլորտի «կանաչացումից» առաջ հարկավոր է փնտրել և գտնել առավել նպաստավոր ճանապարհները: Սա կնպաստի առավել օպտիմալ ձևով անցում կատարել տնտեսական նոր համակարգին:
- Ուսումնասիրվել է տնտեսության կանաչացման գործում փոքր և միջին բիզնեսի ներգրավվածությունը: ՀՀ-ում հնարավոր է ներդնել Grameen Energy ընկերության փորձը: Այստեղ առանձնացվել է նաև թափոնների օգտագործման բիզնեսը:

2) **«Հայ փնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները 19-րդ դարի 70-90-ական թթ.»** (ղեկ. տ.գ.դ. Ռ.Սարինյան) թեմայի շրջանակներում լույս է տեսել Ռ.Սարինյանի «Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները» մենագրությունը: Աշխատության մեջ 19-րդ դարի 70-90-ական թվականների հայ տնտեսագիտական միտքը հետազոտվել է ազատամտական, ազգային-պահպանողական և նարողնիկական հոսանքների ամբողջության, դրանց հայացքների համակարգը միացնող և բաժանող տիրույթների մեջ: Նրանում ընդլայնվել են խնդրի գիտական շրջանակների վերաբերյալ պատկերացումները: Հարցերն իրենց վերլուծական դրվածքով բազմաթիվ ընդհանրություններ են գծում արդի տնտեսական փոխակերպության հետ:

### **III. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված հիմնական արդյունքները**

1) **«ՀՀ և Բելառուսի շուկաների սուբյեկտների գործունեության միջազգայնացումը ուղղված երկու երկրների փնտեսական համակարգերում նոր տեխնոլոգիաների ներգրավմանը, ադապտացման և ներդրմանը» (11ՔԵ-009)** (ղեկ. տ.գ.թ. Ա.Մարգարյան) ավարտված թեմայի շրջանակներում ուսումնասիրվել ու բացահայտվել են տեխնոլոգիաների միջազգային փոխանցման համակարգում շուկայի սուբյեկտների փոխներգործությունների տեսա-մեթոդական հիմքերը, հետազոտվել և ընդհանրացվել են նոր տեխնոլոգիաների ստեղծման ու փոխանցման բնագավառում համաշխարհային և հայրենական փորձը, առանձնացվել ու համակարգվել են համաշխարհային տնտեսության մեջ վերջին տասնամյակների ընթացքում ձևավորված միտումներն ու



մարտահրավերները, որոնք առաջիկա տասնամյակների ընթացքում պայմանավորելու են ազգային տնտեսությունների նորաստեղծական համակարգերի վարքագիծը, սահմանվել են ՀՀ և ԲՀ գիտության և տեխնոլոգիաների ոլորտներին բնորոշ ուժեղ և թույլ կողմերը, հետազոտվել և գնահատվել են Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության տեխնոլոգիաների փոխանցման ներուժը ու նրա արդյունավետ իրացման առավել ուժեղ ուղղությունները, ուսումնասիրվել են ՀՀ-ում և Բելառուսում տեխնոլոգիաների փոխանցման բնագավառում արդյունավետ քաղաքականության իրականացման պայմանները և գործոնները:

Առանձնացվել է տեխնոլոգիաների այն հիմնական շրջանակը, որի գծով Հայաստանի Հանրապետությունը, հաշվի առնելով երկրի ռեսուրսային հնարավորություններն ու սահմանափակումները, առաջիկա երկու տասնամյակների ընթացքում ի գործ է ապահովել նշանակալի զարգացումներ: Այդ համատեքստում փորձ է արվել գնահատել երկրում ստեղծվելիք արտադրատեսակների հիմնական տեխնիկա-տնտեսական չափորոշիչները և դրանց իրացման շուկաների հնարավոր շրջանակը:

Կատարվել է ՀՀ տնտեսության ձեռնարկատիրական միջավայրի ուսումնասիրություն՝ հիմնական չափանիշ ունենալով գործարար հանրության կողմից նորագույն տեխնոլոգիաներ ստեղծելու կամ արտաքին միջավայրից փոխառելու պատրաստակամությունն ու շահագրգռությունները: Նորաստեղծական ձեռնարկատիրության համատեքստում դիտարկվել են այն հիմնական գործոնները, որոնք խոչընդոտում են նորագույն տեխնոլոգիաների ու բաժրտեխնոլոգիական պրոդուկտների ստեղծմանն ու արմատավորմանը: Մասնավորապես, վերլուծության են ենթարկվել այն հիմնական ինստիտուցիոնալ գործոնները, որոնք նոր տեխնոլոգիաների ստեղծման, ադապտացման ու ներդրման հարցում ունեն համակարգաստեղծ նշանակություն:

Բացահայտվել են տեխնոլոգիական արդիականացման առավել հեռանկարային ուղղությունները, դրանց հիման վրա առաջարկվել է Հայաստանի Հանրապետության տնտեսության նոր տեխնոլոգիական պլատֆորմի նախագիծ՝ ելնելով տնտեսությունը նորաստեղծական տնտեսական աճի պարադիգմի փոխադրելու անհրաժեշտությունից, մշակվել են Հայաստանի Հանրապետության ինովացիոն քաղաքականության և ներքին շուկայում տեխնոլոգիական փոխանցման հիմնական ուղղություններն ու դրանց հիմնական գործիքները:

Հրատարակվել է 30 հոդված և 1 մենագրություն: Բելառուսական կողմի հետ համատեղ նախապատրաստվել ու գիտական ամսագրերում հրատարակվել են 16 համատեղ հոդվածներ, որոնցից 6-ը արտերկրյա գիտական մամուլում:

**2) «Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»** (թեմ.ղեկ. տ.գ.դ. Ա.Բայադյան) թեմատիկ ֆինանսավորմամբ թեմայում ուսումնասիրվել է պետական պարտքի և դրա կառավարման ժամանակակից հայեցակարգային մոտեցումները, կառավարման նպատակները, սկզբունքները, ռազմավարությունը և գնահատման մեթոդաբանական խնդիրները, պետական պարտքի հետ կապված ռիսկերն ու դրանց գնահատման եղանակները: Վերլուծվել և համակարգվել է պետական պարտքի կառավարման արտերկրյա փորձը, հետճգնաժամային ժամանակաշրջանում դրա կառավարման անհրաժեշտությունը և մոտեցումները, պետական պարտքի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման խնդիրները: Ցույց է տրվել, որ ՀՀ պետական պարտքի կառավարման արդյունավետության անհրաժեշտությունը հատկապես սրվել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներից սկսած, ինչն առավել, քան հրատապ է դարձնում փոխառու միջոցների տնտեսապես հիմնավորված աղբյուրների փնտրման և կառավարման մոտեցումների մշակման անհրաժեշտությունը:

#### **IV. Կիրառական մշակումների արդյունքները.**

**«Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում»** (ղեկ. ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ տ.գ.դ., Վ.Հարությունյան) թեմայի շրջանակներում մշակվել են հարկային վարչարարության բարելավմանը նպաստող ուղիներ, ինչպես նաև պետության և տնտեսավարող սուբյեկտների հարկային ներուժի գնահատման համալիր մեթոդներ և առաջարկվել է վերջինիս կարճաժամկետ մոդել՝ ստվերային տնտեսության նվազեցման համատեքստում, ինչը կնպաստի ՀՆԱ-ի 5-10% ավելացմանն ու 1,5-2% ստվերայնության կրճատմանը ՀՀ տնտեսական բարեփոխումների արդի փուլում:

2013թ. կառավարությանն են ներկայացվել երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր Հրաչիկ Ավագյանի **«ՀՀ Լեռնահանքային արդյունաբերության**

**հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը»** գիտական թեմայի շրջանակներում ստացված եզրակացությունները և առաջարկությունները, որոնք օգտակար կարող են լինել ՀՀ-ում իրականացվող հակաճգնաժամային միջոցառումների և նորացվող տնտեսական քաղաքականության համատեքստում, ՀՀ լեռնահանքային արդյունաբերության աշխատանքների արդյունավետության բարձրացման, ինչպես նաև շրջակա միջավայրի մաքրության պահպանման գործում:

## **V. Ինստիտուտի գիտաաշխատողների կողմից 2013թ. Հրատարակված մենագրություններն ու համահեղինակությամբ գրքերը**

### **Մենագրություններ**

1. Ավագյան Հ.Ս., ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը, -Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -272 էջ
2. Բայադյան Ա., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, -Եր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -144 էջ
3. Հարությունյան Դ.Վ., Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, մասնագիտ.խմբագիր Ա.Հ.Բայադյան, -Եր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -464 էջ
4. Մարգարյան Ա.Շ., Տնտեսության նորաստեղծական արդիականացման հիմնախնդիրները, -Եր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -280 էջ
5. Սարինյան Ռ.Ն., Հայ տնտեսագիտական մտքի հիմնական հոսանքները (XIX դարի 70-90-ական թվականներ), -Եր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -224 էջ
6. Սանամյան Է., Հակաճգնաժամային միջոցառումները և դրանց արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում, -Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -208 էջ
7. Սաֆարյան Ա.Գ., Հանրային կառավարման արդյունավետության բարձրացման և հարկաբյուջետային համակարգի բարելավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, -Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -304 էջ
8. Սովարյան Յու.Մ., Հարությունյան Վ.Լ., Սարգսյան Վ.Ա., Խաչատրյան Վ.Վ., Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը, -Եր, ՀՀ ԳԱԱ

«Գիտություն» հրատ., 2013, -232 էջ

9. Սուվարյան Յու., Միրզոյան Վ., Հանրային կառավարման տեսություն և պատմություն, -Եր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -368 էջ
10. Khachatryan V.V., Terzyan H.T., Makaryan A.R., Post-Crisis Developments in Armenia, Yerevan, Armenia, “Gitutyun” Publishing House of the NAS of the RA, 2013, -106p.
11. «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (գիտական հոդվածների ժողովածու), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. ՏԻ, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ
12. «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (գիտական հոդվածների ժողովածու), գիրք 2, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. ՏԻ, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -224 էջ
13. «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր, արդի հիմնահարցեր», գիտ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -254 էջ

***«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013))***

/

***Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ , Գիտությունե հրատ., 2013.- 254 էջ***

1. Սուվարյան Յու., Սարինյան Ռ., Ներածության փոխարեն. հայ տնտեսագիտական մտքի պատմության համառոտ ակնարկ, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 5-13
2. Հարությունյան Վ., Սարինյան Ռ., ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական հետազոծը, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 13-36
3. Հարությունյան Վ., ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտու-

տի ներկան և ապագան, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 36-48

4. Սուվարյան Յու., Գիտություն, կրթություն, տնտեսություն. ինտեգրման և կառավարման արդի հիմնախնդիրներ, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 48-80
5. Թամազյան Ա., Ձեռնարկատիրական ռիսկի գնահատման մեթոդական որոշ մոտեցումներ, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 80-107
6. Ավագյան Հ., Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների պաշարները, ռեսուրսները և դրանց օգտագործման հիմնախնդիրները, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 107-128
7. Հարությունյան Դ., Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 128-145
8. Կիրակոսյան Գ., Բյուջետային քաղաքականության մշակման և իրականացման տեսամեթոդական հիմնահարցերը, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 145-164
9. Բաղդասարյան Ք., Հարությունյան Տ., Հարկային բեռի կողմնորոշման տեսական հարցադրումներն ու դրանց տեղայնացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 164-176
10. Սարգսյան Կ., Տնտեսության պետական հակաճգնաժամային կարգավորման

հիմնախնդիրներն արդի փուլում, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 176-186

11. Բայադյան Ա., Ֆինանսական ճգնաժամի դրսևորման միտումները և դրա հաղթահարման ուղիները ՀՀ-ում, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 186-200
12. Մանասերյան Թ., Միջազգային առևտրի տեսությունները, փոփոխվող աշխարհը և Հայաստանը, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 200-225
13. Затицян А., Новые реалии мировой экономики после глобального финансового кризиса, «ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ. հետազոծի և ապագայի ուրվագծեր. արդի հիմնահարցեր» (Գիրքը նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (1943-2013)) / Գիտ. խմբ.՝ Վ.Լ.Հարությունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013.- 254 էջ, էջ 225-235

**«Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ**

14. Հարությունյան Վ., Բաղդասարյան Ք., Տնտեսության «ոչ ֆորմալ» հատվածի հարցի շուրջ ՀՀ-ում և աշխարհում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 6-10
15. Հարությունյան Վ., Սարգսյան Կ., ճգնաժամերի վերլուծությունը՝ համաաշխարհային տնտեսության զարգացման տարբեր փուլերում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 10-16
16. Հարությունյան Վ., Եղիազարյան Բ., Բաբայան Է., Թերզյան Հ., «Կանաչ տնտեսության» անցման ընդհանրական պայմանները, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական

գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 370-381

17. Անաստասյան Ա., Հարկային քաղաքականությունը ՀՀ-ում և դրա արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 25-29
18. Անաստասյան Ա., Հարկային քաղաքականության ոլորտում ՀՀ և միջազգային փորձի համեմատական վերլուծությունը, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 29-34
19. Ավագյան Հ., Երկաթահանքերի շահագործման հետ կապված հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 171-179
20. Ավագյան Հ., Հազվագյուտ տարրերն ու հողատարրերը միլիարդավոր դոլարների «աղբյուրներ», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 179-184
21. Բաղդասարյան Ք., Հարությունյան Տ., Ստվերային տնտեսության և հարկային վարչարարության փոխազդեցության հարցի շուրջ, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 37-41
22. Բայադյան Ա., Փոխարժեքի ձևավորման առանձնահատկությունները և փոփոխությունների դինամիկան ՀՀ-ում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 41-45
23. Բայադյան Ա., Փոխարժեքի փոփոխության ազդեցությունը ՀՀ տնտեսության զարգացման վրա, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -

Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 45-49

24. Բայադյան Ա., Հովհաննիսյան Լ., ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը, դրա գործունեության խթանման հիմնահարցերն ու լուծման ուղիները, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 184-191
25. Թադևոսյան Հ., Ռիսկերի կառավարման և պետական կարգավորման լծակները գյուղատնտեսության զարգացման ոլորտում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 191-199
26. Խաչատրյան Վ., Հայաստանի Հանրապետության 2012 և 2013թթ. պետական բյուջեների համեմատական վերլուծությունը՝ հետճգնաժամային զարգացումների համատեքստում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 70-78
27. Կոստանյան Շ., Ալոյան Ռ., ՀՀ գյուղատնտեսության զարգացմանը նպաստող կարգավորման ուղիները, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 205-211
28. Հակոբյան Օ., Հայրապետյան Ա., Պետական պարտքի գնահատումը որպես հարկաբյուջետային քաղաքականության կայունության նախապայման, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 78-83
29. Հովհաննիսյան Լ., Ազատյան Լ., ՀՀ գյուղատնտեսության ներկա վիճակը և զարգացման հնարավոր ուղիները, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 222-229
30. Ղարիբյան Գ., Մկրտչյան Տ., Տնային տնտեսությունների խնայողությունների տեսակների տիպականացումը և դրանց էության վերլուծությունը, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ



Մ.Քոթանյանի անվ ՏԻ,, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 343-347

31. Զանինյան Է., Հարկման սկզբունքների կիրառման ժամանակակից մոտեցումները, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ,, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 108-115
32. Զանինյան Է., Հարկային քաղաքականության արդյունավետության խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ,, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 115-123
33. Մակարյան Ա., Անցում բազմաստիճան (բազմաբաղադրիչ) կենսաթոշակային համակարգի, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ,, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 347-352
34. Մարգարյան Ա., Պարկային խթանների դերը տեխնոլոգիաների փոխանցման գործոնների համակարգում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ,, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 229-237
35. Մարկոսյան Ա., ԱՊՊԱ համակարգի ձևավորումը և զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ,, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 358-370
36. Ներսիսյան Գ., Ստվերային եկամուտների գնահատման հիմնական մոտեցումները, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ,, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 89-94
37. Ներսիսյան Գ., Հարկման արտերկրյա մոտեցումները և դրանց գործնական կիրառության հնարավորությունները ՀՀ-ում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ,, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 94-98

38. Չինարյան Վ., Ռիսկերի գնահատումը և պարտքի կառավարման ծրագրային փաթեթները արտաքին պետական պարտքի կառավարման գործընթացում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 98-103
39. Չինարյան Վ., Արտաքին պետական պարտքի կառավարման արտերկրյա փորձը ճգնաժամի պայմաններում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 103-108
- 40.Սարգսյան Ա., ՀՀ կորպորատիվ արժեթղթերի շուկայի կառուցվածքը, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 123-132
- 41.Սարգսյան Կ., Հակաճգնաժամային միջոցառումների արտերկրյա փորձի վերլուծությունը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի համատեքստում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 132-137
- 42.Սարգսյան Լ., Արտահանմամբ պայմանավորվող տնտեսական աճի հեռանկարները Հայաստանում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 263-268
- 43.Վասիլյան Տ., Ֆինանսական գործառնությունների հարկման անհրաժեշտությունը և նպատակը. Ջեյմս Թոբինի առաջարկությունը՝ ճգնաժամի հաղթահարման լծակ, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 137-141
- 44.Վասիլյան Տ., Պարկային բեռի կառավարման մեխանիզմների փոփոխությունները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում. Եվրամիության անդամ երկրներ և Հայաստան, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 141-149

45. Քոթանջյան Ս., Արտաքին պետական պարտքի սկզբունքներն ու կառուցվածքը, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանջյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 149-156
46. Քոթանջյան Ս., Պետության դերը արտաքին պետական պարտքի կառավարման գործում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանջյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 156-164
47. Акопян И., Затикян А., Особенности налогов на собственность в Армении, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանջյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 164-171
48. Затикян А., Мельникова Л., Поддержка малого и среднего инновационного предпринимательства в РА, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանջյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 275-282
49. Маргарян А., Сверлов А., Динамика внутренних рынков трансферта технологий Республики Армения и Беларусь: сравнительный анализ, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանջյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 282-290
50. Маргарян А., Солодовников С., Сверлов А., Проблемы привлечения и диффузии новых технологий в экономические системы Армении и Республики Беларусь, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանջյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 290-300
51. Таранян И., Дорожные фонды как альтернативный механизм финансирования автомобильных дорог, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանջյանի անվ ՏԻ., պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 305-316

52. Оганян Т., Пути инновационно-инвестиционного развития промышленных и сельскохозяйственных предприятий РА, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտա-ժողովի նյութեր - 2013), գիրք 1, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ ՏԻ, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -390 էջ, էջ 300-305

**«Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (գիտական հոդվածների ժողովածու), գիրք 2, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. ՏԻ, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -224 էջ**

53. Ավագյան Հ., Ամուլսարի ոսկու «հանքավայրի» «կորզաթափոնների» և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը: «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (գիտական հոդվածների ժողովածու), գիրք 2, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. ՏԻ, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -224 էջ , էջ 101-105

54. Ավագյան Հ., Տարանյան Ի., Ազնիվ մետաղները Քաջարանի հանքանյութերում: «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (գիտական հոդվածների ժողովածու), գիրք 2, ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. ՏԻ, պատ.խմբ. Վ.Լ.Հարությունյան, -Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, -224 էջ , էջ 105-108

